ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD
Poste Restante
Athènes (Grèce)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ· · · · · · 5 Ֆրանկ·
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ· · · · 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ· · · · ½ „

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ	ԱԹԷՆՔ	Nr 2 ԱՊՐԻԼ Nr 2	1894	ՄԻԱՄՍԵԱՅ

ՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ՀԻԱՆԴ ՄԱՐԴԸ ՀԱԻԱՏԱՑՆՈՒՄ Է. "ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ ՏԻՐՈՒՄ Է
ԿԱՏԱՐԵԱԼ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԻՒՆ„.

ԿԱՐԾԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԳԼՈՒԽՆԵՐ

Կան գլուխներ, որ ոչինչ կարծիք չունեն. կան գլուխներ, որ ունեն կարծիքներ, բայց շինծու, նախապաշարված, սխալ, և առաջիններն աւելի լաւ են, քան վերջինները։

Այսպէս, օրինակ, քարոզել թէ ազգերը պէտք է իրար սիրեն և կենսական համերաշխ յարաբերութիւններով ապրեն, կարծիք ունեցող վերոյիշեալների կողմից համարվում է հարազատ ազգն ու հայրենիքն ուրանալ, դաւաճանել։

Այսպէս, յայտարարել թէ ամեն մարդ իրաւունք ունի ապրելու ոչ թէ ուրիշներին կերակրելու համար, եւ ուտելու, որպէսզի կարողանայ ապրել, համարվում է անհեթեթութիւն։

Ասել թէ աղքատութիւնը, թշուառութիւնը պէտք է վերանայ եւ տեղի տայ բոլոր մարդկանց հաւասար բարեկեցութեան — նշանակում է քրէական յանցանք գործել Ոսկէ Հորդի դէմ։

Ունենալ այն սկզբունքը, թէ չը պիտի այնպէս լինի, որ մէկ առանձին ազգի եւ ամբողջ մարդկութեան մէկ ահագին մասը քրտինք-արիւն թափէ, աշխատէ շարունակ եւ միւս փոքրիկ մասը միշտ չարաչար շահագործէ աշխատաւորին եւ նրա վաստակը, այլ թէ պէտք է ամեն-մէկը և ամենքն աշխատեն և վայելեն իրանց սեփական վաստակը, — նշանակում է "աստուածային նախասահմանութեան եւ բնութեան օրէնքի" դէմ լինել։ Որտե՞ղից են մարդիկ վերցրել այդ աստուածային նախասահմանութիւնը, եթէ ոչ իրանց երեւակայութիւնից որտե՞ղից են եզրակացրել բնութեան այդ իրանց ասած "օրէնքը", եթէ ոչ իրանց տգիտութիւնից։

Դարոզել թէ ոչ միայն ունեւորն, այլ եւ աղքատը, չքաւորը, աշխատաւորը, միւնոյն բնական զօրութեամբ, իրաւունք ունեն ծգտելու դէպի ուսում, գիտութիւն, առաջադիմութիւն, մտաւոր լուսաւորութիւն և կենսական բարեկեցութիւն, և թէ այդ գիտակցութեան հասած մարդը և աշխատաւոր դասակարգը պէտք է ձգտեն իրականացնել այդ մարդկային բնական պահանջը եւ չը թողնել, որ նա լինի և մնայ ունեւոր դասակարգի մի մենաշնորհ, — համարվում է մահացու մեղք, որովհետեւ աղքատը, աշխատաւորը "չէ կարող" այդ բաներին ձգտել, նրա համար չէ այդ պահանջը. նա էլ "իր բաժինն" ունի կեանքում — չարքաշ աշխատանք։ Օ՜ հրաշալի կարծիք...

Եւ այսպէս, ուրեմն, խնդիրը վճռված է այն գլուխների կողմից, որ "կարծիք ունեն"։ Դրանից աւելի լաւ է անկարծիք գլուխ ունենալ։ Քարոզել սէր, համերաշխութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն, արդարութիւն — նշանակում է յանցանք գործել։ Մեծամիտ տխմարութեամբ ազգերի մէջ ատելութիւն սերմանել, հարստի ու զօրաւորի բռունցքն աղքատի ու տկարի գլխին, հարստի ու զօրաւորի շահագործելն աշխատաւորին — օրինական, բնական ու անհրաժեշտ համարել։

Այսպէս, ծոյլերի, անգործների խմբակը, խմբակը շահագործողների, ունեւորների եւ դրանց արբանեակ ու շողոքորթ գրագէտ խմբակներն — այդ ամենքն իրանց իրաւունքն են համարում կողոպտել, մաշել, մահացնել աշխատաւոր ժողովրդին եւ նրա դատը միեւնոյն ժամանակ աձնական գիտութիւնների գործիք դարձնել — եւ դա բարոյական է, ազգօգուտ է, փրկարար է։ Իսկ նոյն իրան թշուառ աշխատաւոր ժողովրդի շահերը պաշտպանել, իրաւունքը պահանջել եւ մարդկանց մէջ հաւասարութեան սկզբունքները քարոզել, ի հարկէ, ազգակործան, շաղակրատական, վնասակար ընթացք է։

Շահագործողներ ժողովրդի աշխատանքի, շահագործողներ ժողովրդի տգիտութեան, ձեր ամենքի, ձեր տեսակների համար պատմութիւնն արդէն որոշել է իր էջը — պատժի եւ նախատինքի ցուցարանը (pilori)։ Այնտեղ դուք ձեր տեղը կը լինէք։ Եւ այդ կը լինի օտարակերգերի և ձեղ պէսների վախճանը։

Իսկ մենք, չունենալով ոչ ձեր գլուխը և ոչ ձեր զգացումը, մենք կասենք միշտ հայ ժողովրդին. քո պատմական ձգտումներդ արդար են եւ նրանց իրականացումն անխուսափելի. ձգտենք ձեռք բերել այնպիսի վիճակ, որ քեզ միջոց տայ այնուհետեւ ձգտելու քո պատմական իդէալի իրագործման եւս։ Այդ իդէալն է — միջազգային համաշխարհային միութիւն ու համերաշխութիւն, սէր ազգերի միջ դէպի միմեանց, հաւասարաբաժին աշխատանք, վայելք ու գործակցութիւն մարդկանց մէջ և ամենքն ազատ քաղաքացի մէկ և ընդհանուր հայրենիքի — համայն աշխարհի։

Եւ այդ ժամանակը կը գայ։ Դա հեռու չէ։

ԵՐԿՐԱՇԱՐԺ ՑՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԲԱՐԵՄԱՂԹՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԱԶԳԻ ՀԱՄԱՐ

9 ապրիլի, 'ի Ամէնք.

Ուրախութիւնից սիրտս պատռվելու չափ բաբախում է։ Մեծ անհամբերութեամբ սպասում եմ ձեր հեռագրին, որով աւետէիր, թէ այդտեղ՝ Խորէն պատրիարքի անիծած "Հնչակի" և Հնչակեանների տունը փլչել կործանվել է վերջապէս և ի փրկութիւն իմ սիրած հպատակ հայոց ազգի՝ իմ գերիշխանութիւնը հայոց վրայ ազատվել է այդ "ստահակների", ինչպէս փառաւորապէս օծել է նրանց մեր խորամանկ Աշըգը, անընդհատ, ազգակործան, և ինձ ու տէրութեանս համար խիստ անպատուաբեր ու վնասակար հարուածներից։ Ջերմեռանդութեամբ աղօթք եմ ուղղում մեծն Ալլահին։

Սուլթան Համիտ Բ Խան.

***

9 ապրիլի, 'ի Ամէնք.

Կաղօթեմ առ մեծն Աստուած՝ մեր բարերար, եւ բարեսիրտ, մարդասէր և հպատակասէր, հայրախնամ և հայրագորով, գթառատ և վեհանձն, օծեալ և փառապանծ, յաղթական և աստուածատիպ, օգոստափառ և վեհափառ Սուլթան Համիտ Կայսեր թանկագին և ամենասիրելի և ամենապաշտելի կենաց համար, այն սուրբ Կայսեր, որ Աստուածն ու մեծ Ալլահը յաւիտեանս յաւիտենից հաստատ պահէ Իր բարձր Գահին վրայ և սուրը կտրուկ ընէ Հայոց գլխուն վրայ... և վերջապէս սպասող և յուսով եմ և անհունս, մեծապէս գոհ որ Աստուած անսաց իմ ջերմ աղօթքս և աստուածային անէծքով կործանեց այդտեղ "Հնչակի" տունը և մեռցուց Հնչակեանները, այդ ազգավնաս և անմեռօն հայերը, և միանգամէն թաղեց զանոնք աւերակների տակ, առանց սուրբ հաղորթութեան, որով դժոխք կերթան անոնց հոգիները, և վերջապէս իմ պաշտելի Կայսրն և իմ սիրեցեալ հայ ազգն ազատեցան հայ յեղափոխական տագնապէ։ Ամէն։

Խորէն Արք., Պ. Հ. Կ. Պոլսոյ.

***

10 ապրիլի, 'ի Ամէնս.

Փութով հեռագրեցէք թէ զտունն "Հնչակի" և Հնչակեանց կործանեաՀ է արդեօք երկրաշարժ աղէտի մի պատճառաւ, վասնզի թէեւ Հնչակեանց գործք և եռանդ գոված եմ բաղում անգամ, բայց փրփուր իբերան հանապազ յարձակած եմ անոնց ընկերվարական վնասակար սկզբանց դէմ, և անոնց մահն տան աւերակաց տակ վնաս մի չը կրնար համարուիլ վասն ազգին հայոց, այլ և օգուտ մի է մեծագոյն, քանզի "Հայքն" և "Հայքեանք" այսուհետեւ նոցա տեղը պիտի անցնին մեծամիտ զօրօք և ռազմամթերօք, և ինչպէս իրենց բերան "Հայք" կը քարոզէ միշտ, զազգն ազգային քաղաքականութեամբ և հայկական ոգեբանութեամբ յեղափոխական և ոչ յեղափոխական, դիւանագիտական և ոչ դիւանագիտական ճամբայներով եւ մասամբ երկուքն ալ միաժամանակ, ատենախօսական, մարմնամարզական, բժշկական, ոգեբանական, լեզուաբանական և այլ մասամբ իւիք միջոցներով տանել դէպի փրկութիւն, քանզի, վասընզի, որովհետեւ Հնչակեանք, թէպէտեւ մեծ եռանդեաւ գործիչք, բայց բաւական հայ չեն եւ ազգային քաղաքականութեան եւ հայկական ոգեբանութեան եւ կեդրօնական յանձնախումբի մի և մասամբ իւիք դէմ են, եւ այլն, եւ այլն, եւ այլն....

Մ. Ս. Գաբրիէլ.

Ցնորէն խմբագիր "Հայքի".—Նիւ-Եորք

***

10 Ապրիլ, Ի Ամէնք.

Մեծ երկրաշարժեր տեղի ունին Ցունաստանի մէջ։ "Հնչակի" տունը թերեւս փլած է և տեղիդ Հնչակեաններին մահ պատճառած։ Ցաւ կըզգայի ատկէ, եթէ Հնչակեաններ իմ դիւանագիտական վերին աստիճանի օգտակար և ազգի համար փրկարար ժրաջան գործունէութիւնը քընադատած եւ ծաղրած չըլլային։ Գամառ-քաթիպան գրչով գործեց. ես ալ Գամառ-քաթիպս մըն եմ, կրնամ միայն գրչով գործել, և թէեւ սուր ալ ժամանակին քարոզած եմ գրչով, բայց գործնականին մէջ սուր գործածող Հնչակեանների դէմ ալ եմ։ Եւ իրաւամբ. զի անոնք կը քննադատեն առկատստոն և ուրիշների աղերսագրեր մատուցանելս և չեն համարեր չափազանց մեծ զոհողութիւն մը, որ ես ձմեռ ատեն, շոգեկառքի առաջի քլաստով, ութ երկար ժամուայ ծանր ճամբորդութիւն մ'ըրած եմ ազգիս համար։ Երբ ես ազգին կըսէի Լոնտոնէն, դառնալով Կաստոնի և Սոլզպըրի քարտուղարներին իմ ըրած այցելութիւններէս, թէ Մեծն Ծերունի պիտի փրկէ զՀայը և Սոլզպըրի ալ գէշ չէ և ռուսաց Վեհապետի ոտքերի տակ կը կսրծեմ դնել այսօր հայ ազգի ճակատագիրը — Հնչակեանք միշտ զիս կը ծաղրէին.. Անոնք ծաղրեցին, սուլեցին եւ խայտառակեցին զիս բազմիցս Ամերիկայի մէջ անցեալ ամառ, ուր սակայն կաշխատէի այնպէս ճառախօսել, որ Հնչակեանք հաւանին զիս... Բայց ի՞նչ ըսեմ. յեղափոխութիւնի լուծելիք դատը չէ հայկական դատը, որ ես պաշտպանած եմ երբ պատգամաւոր (?) դացած էի Պերլինի Վեհաժողովի, ես, որ տասնեւերեք տարեկանէս սկսած եմ ազգային գործունէութիւնս և քսանհինգամեակս տօնած եմ ինքս մինակ, ի նախատինս ազգիս որ զիս չը գնահատեր։ Այո՛, յեղափոխութիւն պէտք չէ և Փորթուգալեան մեծըն բարեկամս շատ աղէկ կընէ որ բան մը ըրած չէ եւ չուզեր ընել, որովհետեւ անոր չըրածը և իմ դիւանագիտութիւնն յեղափոխութենէ բարձը է.... Կը ցաւէի կըսեմ "Հնչակի" տան կործանումը և իրենց մահը, եթէ այդ ամենն՝ ինչ ըսի չի պատահեր... զի իմ դէմ ըլլալ, մէկ է թէ՝ ազգիս դէմ ըլլալ, որովհետեւ ես մարմնացումն եմ ազգիս։ Հէքիաթներս, ֆօքլ-լորականն, ազգային, գրական, ուսուցչական և այլ և այլ դիւանագիտական գործերս չըլլային՝ Հայ ազգը Եւրոպայի դիւանագիտական բարձր և կանաչ սեղանին վրայ դիակի մը պէս պիտի ինկած ըլլար.... Վերջապէս ես եմ ամէն բան, եղած եմ և պիտի ըլլամ միեւնոյն...

> Նախկին ուսուցիչ, երեսփոխան, խել մը ընկերութիւնների անդամ պատուաւոր և ոչ պատուաւոր, պատգամաւոր Պերլինի Վեհաժողովին, փրոֆէսօր որ աշակերտ չունի, տեսուչ "L'Arménie"-ի, այս-ինչ, այն-ինչ, եւ այլն...
>
> Մ. Շերազ.

***

10 ապրիլի 'ի Ամէնք.

Վերջապէս, ո՜հ, վերջապէս կրնամ քիչ մը ազատ շունչ առնել. վերջապէս պիտի ազատիմ այն սեւ գեւէն, որ ինձ գեւոտութեան հիւանդութեան մէջ ձգեց ամբողջ տարիներ. վերջապէս պիտի ըսկ-

սին կրկին բացուիլ իմ հարստութեանս աղբիւրներ, որ անիծեալները խպառ ցամքեցուցին. վերջապէս կրնամ իմ մենաշնորհս համարել յեղափոխութիւնը, թէեւ մինչեւ հիմա իմ գործեր տեսնող չէ եղած, և այդ՝ որովհետեւ Սեւ Դովի յատակը կը պատրաստեմ և միշտ կը պատրաստեմ ազգային ներքին ոյժերը յեղափոխութեան մը համար։ Վերջապէս իմ անգործութիւնն ալ աչքի չէնալ, զի ալ չերեւիր այդ. վերջապէս անհուն հաճոյքով մը դամբանական պիտի կարդամ այդ ատելի „Հնչակի“ և Հնչակեանների գլխուն որ իմ գերեզմանս փորեցին. վերջապէս արդէն ալ համարձակօրէն — մինչեւ հիմա վախով կընէի — պիտի կրնամ ատոնց անուանել ազգակործան, վատ, դաւաճան, մատնիչ, և ալ ոչ ոք կը մնայ որ իմ ջիգուիտութիւնս երեւան հանէ. վերջապէս. . . . . Ա՜հ, վերջապէս ատոնց տունն ալ անշուշտ քանտուեցաւ երկրաշարժէն. . . կաղօթեմ Աստծուն, որ սրտիս և կեանքիս միակ փափագն և նպատակն իրագործուած ըլլայ։ Կը ցաւիմ միայն այն, որ այսուհետեւ „Արմէնիաի“ էջերը պիտի դատարկ ըլլան, զի „Հնչակ“ չըլլար այլեւս. . . բայց կը մխիթարուիմ, որ շարունակ ազդիէն-անդիէն եկած անշնորհք և անմիտ գրութիւնք և օտար թերթերէն քաղած, բայց իբրեւ թէ սեփական լուրեր, և անվերջ յայտարարութիւններ պիտի զետեղեմ անոր մէջ. . . Ա՜հ, վերջապէս. . . Բայց կործանեցա՞ն արդեօք. . . Ա՜ման, շուտ հեռագիր մը. . . հոգիս կելնէ անհամբերութենէ։

Ինքնակալ ընդհ. տնօրէն չը ծնած-մեռած Հ. Հայրեն. Մխիթեան և խմբագիր-տնօրէն „Արմէնիաի“։ Մ. Փ.

Ա՜Հ, ՎԱՏԵՐԻ ԾՆՈՒՆԴ ՎԱՏԹԱՐ. . .

Կար ժամանակ, ժողովուրդը
Ցոյսեր ունէր հայ հարուստէն
Եւ կը կարծէր, թէ այդ մարդը
Պիտի նորան փրկէ ցաւէն։
Ուսուցիչներ, ազգի ջոջեր,
Ամենք մէկտեղ հարուստին հետ
Կասէին թէ, „չես համբերեր,
Զո դու, ռամիկ. թող որ անհետ
Անենք ցաւերդ ու քեզ փրկենք.
Զէ՞ որ քո գլուխն, առաջնորդն ենք։“
Ազգասէրնե՜ր իրենց համար
Կասէին մեզ միշտ, անդադար. . .
Ա՜հ, վատերի ծընունդ վատթար։

Օր մ'ալ ասին. „սահմանական
Մի դըրութիւն ունինք այսօր.
Բարերար է մեր մեծ սուլթան,
Նա մեզ տուաւ կեանք նոր, փառաւոր։“
Ամիրաներ, չօրբաչիներ,
Խմբագիրներ. . . խել մը „գործիչ“
Խըլացուցին մեր ականջներ
Ճառով, երգով գովաբանիչ,
Եւ միշտ ասին՝ „համբերութիւն.
Մօտ է ահա քո փրկութիւն։“
Ազգասէրնե՜ր իրենց համար
Կասէին մեզ միշտ, անդադար. . .
Ա՜հ, վատերի ծընունդ վատթար։

Ողջ լինի խեղճ ժողովուրդը.
Անկէ քաշած արիւն-ծուծէն
Փարա դիզած՝ էր հարուստը,
Գանգատ չունէր բնաւ իր փորէն։
Եւ ամիրա, երեսփոխան
Աղէկ քէյֆէր միշտ կանէին,
Սուրբ գինիէն սահմանական
Դըրութիւն շատ կհոլովէին,
Եւ — ինչո՞ւ չէ — քիչ չեն խըմած
Իրենց խաբած ռամկին կենաց։
Ազգասէրնե՜ր իրենց համար
Կասէին մեզ միշտ, անդադար. . . .
Ա՜հ, վատերի ծընունդ վատթար։

Լռնութեան տակ կաղաղակեր
Ժողովուրդը միշտ փրկութիւն։
Նոքա՝ իրենց հռչակած տէր՝
Կասէին նրան՝ համբերութիւն։
Մեծ պատերազմ, կռիւ, հալածանք,
Կողոպուտներ, հարկեր ու սով,
Ցուն-տեղ, պատիւ — շատ տառապանք
Ռամիկն տեսաւ իր սեւ օրով. . .
Այժմ ալ կասեն՝ „հանգիստ եղէք.
Եւրոպայէն փրկանք ունէք“։
Ազգասէրնե՜ր իրենց համար
Կասէին մեզ միշտ, անդադար. . .
Ա՜հ, վատերի ծընունդ վատթար։

Աըտրիճները ոտքի ելան
Ցեղափոխել կեանքի պայման,
Արիւն թափին, շատեր ընկան,
Կարմիր օրերն արդ ծագեցան. . .
Բայց ժողովուրդն արդէն խաբած՝
„Ազգասէրներն“ ձուկ որսացին,
Պղտոր ջրի մէջ. ետքն ալ ընկած
Հերոսների շիրիմք կոխին,
Զի հանգիստ տեղ նստած՝ մեծեր
Ազգի չէին ալ հռչակուեր. . . .
Ազգասէրնե՜ր իրենց համար
Կասէին մեզ միշտ, անդադար. . . .
Ա՜հ, վատերի ծընունդ վատթար։

Ժողովրդի Գործի դրօշակ,
Դրօշակ ռամկի ապստամբութեան
Կը ծածանի ալ համարձակ —
Արիւնագոյն նշան փրկութեան։
Խըլուրդների պէս հողի տակ
Մեր կեղծ ջոջեր պիտի մտնան,
Որ այժմ ռամկի ցաւէն դժնդակ
Իրենց դըրամ, անուն կորսան։
Օր մ'ալ նոցա պիտի աւլէ
Ժողովուրդն իր խեղճ հողէ. . .
Ազգասէրնե՜ր իրենց համար,
Կասէին մեզ միշտ, անդադար. . .
Ա՜հ, վատերի ծընունդ վատթար։

1 մայիսի 1894. ԽԵՆԹԸ

ԻՄ ՊԱՐԿԻՑ

Թիւրք կառավարութեան տրամաբանութիւնը.— „Թիւրքիայի թշնամիներն ասում են միշտ, թէ օրէնքի տեղ մեր երկրում կաշառակերութիւնն է տիրում։ Այո՛, բայց որովհետեւ կաշառակերութիւնը դարձել է օրէնք Թիւրքիայում, ուրեմն, տիրողը դարձեալ օրէնքն է։“

***

Թիւրքը հային կոչում է „գեաւուր“, հայ „ազգասէրը“ Թիւրքին անուանում է „մուռտատ“,— ինչո՞ւմն է տարբերութիւնն այդ երկու խօսքի մէջ՝ իբրեւ բարոյական տրամաբանութիւն։

***

Ներկայումս ամեն տէրութիւնների սկզբունքն է՝ ազատութիւն։ Այսպէս, օրէնքը տրամադրում է. հարստին — ազատ ես վայելելու, աղքատին — ազատ ես. . . . մեռնելու. . . .

***

Կան „գործիչներ“, որոնք շարունակ կրկնում են, թէ իրանց խղճի պէս՝ իրանց երեսն էլ սպիտակ է, ինչպէս ձիւն։ Այդ իրաւ է. նրանց վատութիւնն էլ իրանց երեսին ապտակես՝ այդ երեսը երբէք չի կարմրիլ։

***

Ասում են միշտ՝ ճշմարտութիւնը մերկ է, բայց այնքան տարբեր հագուստներով են նրան զարդարում, որ ի վերջոյ նա անճանաչելի է դառնում։

***

Մի հատուած սոյթանի ճառից իր մինիստրների (նախարարների) ժողովում.— „Օսմանեան տէրութիւնն ամեն տէրութիւնների համար մոդէլ (օրինակ) է և ուսումնասիրութեան արժանի։“ Թագակիր բաշիբոզուկի ասածը ճշմարտութիւն է. իբրեւ հնագարեան բարբարոսական տէրութիւնների զարմանալի կերպով մինչեւ օրս կենդանի մնացած մի տիպար, Թիւրքական տէրութիւնը մոդէլ է և գիտնականների ուսումնասիրութեան արժանի։

***

Մի Թիւրք փաշայի խոնարհ խորհուրդն իր արդարասէր վեհափառին։ — „Հայ յեղափոխականների դատավարութիւններ պէտք չէ անել երբէք, որովհետեւ նրանց շնորհով միշտ ճշմարտութիւնն է երեւան գալիս։“

***

Ինչո՞վ է տարբերվում Թիւրք պաշտօնեան հասարակ աւազակից։ Նրանով, որ պաշտօնեան կողոպտում է ժողովրդին բացարձակաբար, առանց իր անձին վնաս բերելու և տէրութեան օրէնքի հիման վրայ։

«ԱՊՏԱԿԻ» ԼՐԱԲԵՐԸ

Այս վերջին տարին հայկական ասպարիզին վրայ երեւան եկան քանի մը հոգի տեսակ մը պատուական գործիչներ, որոնք կը բարոզեն, թէ հայկական դատը քրիստոնէական դատ է, թէ հայը պիտի փրկել իբրեւ քրիստոնեայի և ոչ իբրեւ մարդու. մարդը չէ հային մէջ, որ արժանի է օգնութեան ու բարեկեցութեան, այլ միայն և միայն քրիստոնեան, որովհետեւ քրիստոնէութենէ դուրս չէք հայութիւն, չէք ազգութիւն, չէք մարդկութիւն։ Զը նայելով որ մարդկութեան միայն մի փոքրիկ մասը կը կազմեն քրիստոնեայ ազգերը և որ ասոնցմէ ամենէն քաղաքակիրթների մէջ քրիստոնէութիւնը շատոնց խախտած է եւ անհատների մեծագոյն թիւին մէջ իսպառ վերացած, այնուամենայնիւ, 19-րդ դարուս վերջերը կը գտնուին այնպիսի մեծամիտ ասպետ գործիչներ, գիտնական և լուսաւորուած կոչուելու յաւակնութիւն ունեցող, որ այդ վերոյիշած անարժան, տարօրինակ, իսիօտական, անճոռնի „փիլիսոփայական“ առաջադրութիւնները (thèse) կը պաշտպանեն։ Բայց այդ գործիչներ իրենց նպատակին հասած կերեւին, որովհետեւ Ամերիկայի և Անգլիայի բոլոր ճէզուիդ, բողոքական և այլ եկեղեցական եւ քաղաքացի ժոլեռանդները, բայց իսկապէս կեղծ ապաշտները, ի նշան իրենց երախտագիտութեան և քաջալերութեան, այն քրիստոնեայ գործիչ առաքեալներին պիտի նուիրեն եղեր խաչ մը անմահութեան, որի վրայ ոսկեգրուած պիտի ըլլայ՝ „չէք հայութիւն, չէք ազգութիւն, չէք մարդկութիւն քրիստոնէութենէն դուրս. չէք մարդ, այլ կայ քրիստոնեայ և ոչ-քրիստոնեայ“. . . Ա՜հ, նորատիպ կենդանիներ. . . .

— 0 —

Սուլթանի սուրը կտրուկ ըլլայ միշտ եւ կախաղանի չուանն ալ ամուր. կառավարութիւնը վերջերս Եօզկատի մէջ նորէն Հնչակեան մըն ալ կախաղան է հաներ։ Կը գրեմ ձեզ, որ ատոր վրա հակահնչակեան հայ գործիչներ միացած շնորհակալութեան ոսկէտառ ուղերձ մը կը պատրաստեն եղեր „Վեհափառին“ մատուցանելու համար։

— 0 —

Յայտնի է, որ Կ. Պոլիս Աշըգեան-շէյխը ըսպաննելու անյաջող փորձ մը ըրած է անցեալները Ցակոբ անուն երիտասարդ մը։ Սուրբ մարդը ատոր վրայ յատուկ այցելութիւն ըրած է սուլթանին, բարեխօսելով ձերբակալուած Ցակոբին համար։ Վերջերս լուր կառնեմ, որ պատրիարքը հովանաւորող հռչակաւոր վատեր, որոնց անունները կը համապատասխանեն Մաքսուտ Սիմոն պէյի և Նուբեան էֆէնտիի անուններին, պատրիարքի կողմէ այդ սուրբ մարդուն բարեխօսութիւնը նորէն կրկնած են մեծ եպարգոսին, խնդրելով. . . Ցակոբը կախաղան հանելը

— 0 —



ԵՒ ՄԻՆՉԴԵՒ ԿԱՏԱՂԱԾ ՇՆԻԿՆԵՐՆ ԵՆ ՎՐԱՆ ՀԱՋՈՒՄ,
ՓԻՂՆ ՀԼՊԱՐՏ, ԱՆԽԸՌՈՎ ԴԷՊ ԱՌԱՋ Է ԳԼՆՈՒՄ...

Աշխարհը սպանելու փորձի վրայ տեղի են ունեցած կ. Պոլիս շատ ձերբակալութիւններ։ Կը հաղորդեմ ձեզ, որ բոլոր ձերբակալեալներն անմեղ են, և կառավարութիւնն այդ աղէկ գիտէ, բայց և այնպէս ձերբակալած է, նոցա անձնական գործերուն և առողջութեան մեծ վնասներ տուած եւ շաբաթներով բանտի մէջ չարչարած և ետքը միայն անոնցմէ շատերն ազատ արձակած։ Այդ ընթացքն ալ—անմեղներ ձերբակալել և յետոյ արձակել—կառավարութիւնը կընէ Եւրոպային ի ցոյց թէ՝ կը տեսնէս ինչ արդարասէր եւ բարի եմ եւ որքան մարդ բանտէն կարձակեմ մէկէն։ Եւրոպան կուրացնելու համար ըրած այդ վայրենի խաղը սակայն որքան սուղի կը նստէ թշուառ անմեղներին... Այդ հաշուի չառնուիր հարկաւ....

— 0 —

Աշխարհի կողմերը սովեալներէն շատեր ձըմեռուան ցրտերին չը դիմանալով, սառած եւ մեռած են—ծերեր, կիներ եւ տղաքներ։ Կառավարութիւնն անոնց թաղելու հրաման տուած չըլլալով հանդերձ, հայ տէրտէրն ալ իր կողմէն հըրաժարած է անոնք թաղելու կրօնական ծիսակատարութիւնն ընել, առարկելով թէ սուրբ հաղորդութիւն առած չեն... Եթէ ստոյգ է այդ լուր, հարկաւ միայն կառավարութեան եւ հայ տէրտէրին ինչ ըլլալը կը ցուցնէ, իսկ ցրտէն սառած թշուառների մարմինն ալ եւ մանաւանդ հոգին ալ այդ ընթացքէն իրենց կենդանութեան ատեն կրած վնասներէն աւելին արդէն չը պիտի կրեն։

ՄՏՔԵՐ

Ոչնչից երկիւղ մի կրէք, եղէք միացած և երբէք մի նահանջէք։ Հէնց որ սկսէք նահանջել, դուք այլ եւս կորած էք, դուք, ձեր կիները, ձեր երեխաները։ Նրանք, որոնք վախենում են մահից, թող մնան իրանց տանը։ Հազար մարդ, որոնք վըճռել են մահից չը խուսափել, աւելի զօրաւոր են, քան յիսուն հազար անվճռական հոգի...

Թոմաս Մունցէր.

*

Կը գայ մէկ օր, երբ մարդ այլ եւս չէ կարողանալ ըմբռնել, որ ժամանակով եղել է մէկ այնպիսի հասարակական կազմակերպութեան, ուր մի մարդ տէր էր միլիոն կարողութիւն, մինչդեռ մէկ ուրիշը ոչինչ չունէր վճարելու իր ճաշը։

Շատոբրիան.

*

Եթէ ճնշվածները ճանաչէին իրանց ոյժը, եթէ թշուառները գիտակցութիւն ունենային իրանց զօրութեան մասին, նրանք շուտով կարող կը լինէին վերջ տալ իրանց ամենօրեայ տանջանքներին։

Շամֆոր.

*

Այն բոլորը, որոնց դու տէր ես քոպէտքերից զատ, պատկանում են ուրիշին։

Պան-Շա-Տանդրա.

*

Ի՞նչ են երկար ու բարակ խօսում ազատութեան վրայ։ Ով աղքատ է, նա գերի է։

Լա Բոետի.

*

Այո՛, մի հասարակութիւն, ուր տեղի ունի թշուառութիւնը, այո՛ մի մարդկութիւն, որ ընդունում է պատերազմները, ինձ թւում է մի ստոր հասարակութիւն, մի ստոր մարդկութիւն. եւ ահա դէպի մի բարձրը հասարակութիւն է, դէպի մի բարձր մարդկութիւն է, որ ես ձգտում եմ.— հասարակութիւն առանց թագաւորների, մարդկութիւն առանց սահմանագլուխների։

Վիկտոր Հիւգո.

*

Թողէք խօսեն, թողէք ձեզ այպանեն, պատրժեն, բանտարկեն, թողէք ձեզ կախեն, բայց միշտ ասացէք ձեր միտքը։

Պ. Լ. Կուրրիէ.

*

Ամեն մարդ իրաւունք ունի ամեն բանի վրայ։

Մաբլի.

*

Ընօթի մարդն ազատ չէ։

Միշել Շըվալիէ.

Մ. Փ. ԿՐԿԻՆ "ՀՆՉԱԿԻ" ԴԷՄ
ԴԵՒՈՏԵԼ Է... "ԱՊՏԱԿԻՑ"։

„ԱՊՏԱԿ"

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

„ԱՊՏԱԿ"ը հրատարակելով, մենք ուզում ենք հայ յեղափոխական գործող մարմնին տալ մի նոր զէնք — երգիծաբանի ապտակը։ Այդ ապտակը՝ թաթախված հայ քաջերի արիւնով՝ պէտք է հարուածէ այն ամենքին, թէ արտաքին և թէ ներքին թշնամիներին, որոնք թշնամի կամ հակառակորդ յայտնվելով յեղափոխութեան, թշնամի և հակառակ են յայտնվում նաեւ հայ ժողովրդային բազմութեան, աշխատաւորի, գեղջուկի եւ բանուորի շահերին։

„ԱՊՏԱԿ"ը պէտք է ղեկավարվէ այն վսեմ գաղափարներով որոնք ժամանակիս ամենաառաջադէմ գաղափարներն են հանդիսանում հանրամարդկային առաջադիմութեան մէջ, գաղափարներ, որոնք արդէն փայլուն կերպով յայտարարված են հայ յեղափոխական ասպարէզի վրայ եւ հայ յեղափոխականի գործերով ու արիւնով արձանագրված են Հնչակեան դրօշակի վրայ։

„ԱՊՏԱԿ"ի լեզուն կը լինի միշտ անկեղծ, համարձակ, շիտակ, համոզված եւ խիստ։ Իր հարուածի տակ նա կը դնէ ամեն հասարակական հիմնարկութիւն եւ հասարակական անձեր, որ հայ յեղափոխական առողջ գաղափարին և ժողովրդի շահերին վնասակար են։

„ԱՊՏԱԿ"ի բոլոր համարներում միշտ կը զետեղվեն նկարներ քաղաքական պարունակութեամբ։

Ամէնք. "ՀՆՉԱԿԻ" տպարան։